ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հունվարի 2022 թվականի № Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի №383Ա ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի №402Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 46-րդ կետը, և հաշվի առնելով «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի դեկտեմբերի 7-ի գրությունը, ինչպես նաև այն, որ կից ներկայացված «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի շենքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի ծածկագիրը և հասցեն տարբերվում են «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0622 լիցենզիայի ստացման հայտով ներկայացված «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի շենքի կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի ծածկագրից և հասցեից՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Անապատ-2» փոքր

հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №383Ա՝

1) որոշման մեջ «մինչև 2022 թվականի մայիսի 25-ը» բառերը փոխարինել «մինչև 2022 թվականի հունվարի 6-ը» բառերով, իսկ «մինչև 2036 թվականի ապրիլի 11-ը» բառերը՝ «մինչև 2037 թվականի հունվարի 6-ը» բառերով,
2) որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Կայանի փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը 4800 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է բացառապես հետևյալ ագրեգատներով (սարքավորումներով).

1) հիդրոտուրբին №1՝ ՇՇ 250-Հ4-65, 2400 կՎտ, 2020թ.,
2) գեներատոր №1՝ CDH 3-15-76-673, 2500 կՎտ, 2020թ.,
3) հիդրոտուրբին №2՝ ՇՇ 250-Հ4-50, 1200 կՎտ, 2020թ.,
4) գեներատոր №2՝ DCП 116-49-4, 1250 կՎտ, 2020թ.,
5) հիդրոտուրբին №3՝ ՇՇ 250-Հ4-50, 1200 կՎտ, 2020թ.,
6) գեներատոր №3՝ CDH 2-16-49-673, 1250 կՎտ, 2020թ.:»:

2. «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի շահագործման համար անհրաժեշտ ճշգրտված կետերով (նիշերով) ջրօգտագործման թույլտվություն, իսկ դրա անհրաժեշտության բացակայության դեպքում համապատասխան հիմնավորումներ իրավասու մարմնից:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 10-ի №383Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» №402Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը:
4. «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանն ամբողջությամբ ազատել 2021 թվականի հուլիսի 9-ի №4279-02 գրությամբ ներկայացված երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային

ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած երաշխիքային պարտավորությունից:

5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
6. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 6-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- դեկտեմբերի 2021թ.